


ԿԱՆՈՆԱԳԻՐ


ՄԻԱՑԵԱԼ ՈՐԲԱԻՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՀԱՅՈՑ Ի ԳՍՀԻՐԷ



ՀԱՅԿԱԿԱՆ ՏՄՈՐԱՆ ՕՐՆԻԿ ՀԱԼԵՊԼԵԱՆ
Շարք Ապս-էլ-Սզիզ Ապսին Բարսօլիմ մոս

1906



ՅԱՌԱԶԱԲԱՆ

Վասպուրականի, Ակնայ և Արարկիրի Հոգատար Որբախնամ Ընկերութիւններն լուծուած են . Արարկիր-Գանիբէ Որբասիրաց Ընկերութիւնը դազրած է գործունէութենէ, և միայն իր ունեցած գրամագլուխն ու արժեթղթերն տեղւոյս Ազգային Առաջնորդարանի հսկողութեան տակ շահագործելու իրաւունք ունի, իր անունն ու կնիքը պահելով մինչև իր պայմանաժամին լրումը :

Վասպուրականի և Ակնայ ընկերութիւնները իրենց ունեցած գրամներն ու արժեթղթերն որբանոցներուն մէջ պաշտպանած որբերուն պէտքին պիտի գործածեն : Նոյն ընկերութեանց Գործադիր ժողովոց ձեռամբ և տեղւոյս Ազգային Առաջնորդարանի հսկողութեան ներքև, ու պակասը Միացեալ Ընկերութեանց անտուկէն պիտի ստանան : Արարկիրու Հոգատար Ընկերութիւնը, իր գոյքը՝ ճշուն գրամի վերածելով՝ Արարկիր կը զրկէ, տեղական որբերուն ի նպաստ :

Ազգատախնամ Ընկերութեան հետ անցած տարի արուած թատերական ներկայացումի հասոյթէ որբախնամներու բաժինն է 12,260, 25 . տակէ (80) ոսկի եզրագտական Սուրբ Էջմիածնի յատկացուած է, . մէկ հինգերորդն ալ միութեան չմանակցող Սերաստիոց Ընկերութեան, և աւելցած ստակը գտնուած գումարին հետ, Միացեալ Ընկերութեանց սընտուկին յանձնուած է :



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԻԱՑԵԱԼ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՀԱՅՈՑ Ի ԳՍ.ՀԻՐԷ

Յօդուած 1.— Միացեալ Ընկերութեանց նպատակն է, հասոյթին կէտով Հայաստանի և Կիլիկիոյ անտերունչ և չքաւոր որբերը խնամել, և կէսովն ալ՝ կարօտ գաւառներու մէջ ուսում տարածել :

Յօդ. 2.— Ընկերութեանց կեդրոնատեղին Գահիրէ է, բայց կրնայ մասնաձիւղեր ունենալ ուրիշ տեղեր :

Յօդ. 3.— Ընկերութիւնս ունի երկու մարմնն, Ընդհանուր ժողով, Գործադիր ժողով :

Յօդ. 4.— Ընդհանուր ժողովը կը բաղկանայ բաժանորդ երկուսն անդամներէ, որոնք կը վճարեն ամիսը՝ առ նուազն մէկ բաժնեգին, այն է 2 դահեկան ողջ եզիպտական. ընկերուհիք միայն ընտրող կրնան ըլլալ :

Յօդ. 5.— Ընդհանուր ժողովոյ մէջ միայն անոնք ձայն ունին, որ գոնէ ընթացիկ եռամսեայն վճարած են, և անամեայներն կը հաշուին ընկերութեանս կազմութեան թըւականը հիմ բանելով :

Յօդ. 6.— Ընդհանուր ժողովի նիստերը տեղի կ'ունենան զիւանի հրաւիրագրով, և նիստերն օրինաւոր են. եթէ երկուսն ընկերաց կէսէն մէկ աւելին անձամբ, կամ գրաւոր փոխանորդութեամբ ներկայ է :

«Եթէ առաջին հրաւերով մեծամասնութիւն չը գոյանայ, զիւանը երկրորդ անգամ հրաւեր կուզէ՝ սոյն ընկերաց, և

այս անգամ, նիստը օրինաւոր է, եթէ անձամբ ներկայ եղողներուն թիւը տասնէն պակաս չէ: Որոշումները վաւերական են, եթէ արուած են գրաւորապէս, և ներկայներու ձայնից մեծամասնութիւնով: Ընդհանուր ժողովի ղեկանի պաշտօնը կը տեւէ մէկ տարի, և անդամները վերընտրելի են:»

Յօդ. 7.— Գործադիր ժողովն կը բաղկանայ եօթն անդամներէ, որ գաղանի քուէով կ'ընտրուին Ընդհանուր ժողովի կողմէ, Ժողովը առանց մեծամասնութեան ոչ նիստ կրնայ բանալ, և ոչ ալ որոշում տալ, և իր որոշումները, և ելմտական բոլոր գործառնութիւնները կանոնաւորապէս կ'արձանագրէ ընկերական տումարներու մէջ:

Ընկերութիւնը կ'ունենայ մէկ կամ աւելի վճարեալ պաշտօնեայներ, գրական և ուրիշ աշխատութեանց համար:

Յօդ. 8.— Ընկերութեան բոլոր հաշուական և աստնաւորական տումարները, տեղւոյս Ազգային Առաջնորդարանի կողմէ նախապէս կը գրոշմուին և կը թուագրուին:

Յօդ. 9.— Գործադիր ժողովը գաղանի քուէով կ'ընտրէ իր Ատենապետը, փոխ-Ատենապետը, Ատենադպիրը, Գանձապետը ու Հաշուակալը: Ժողովին պաշտօնը կը տեւէ տարի մը և անդամները վերընտրելի են:

Յօդ. 10.— Գործադիր ժողովը՝ համարատու է Ընդհանուր ժողովին, սրբոսական է անոր մատուցանել իր սարեկան տեղեկագիրը, և վեցամսեայ հաշուեկշիռը երկու օրինակի վրայ: Նոյն տեղեկագիրները և հաշուեկշիռները Ընդհանուր ժողովէն ընդունուելէ յետոյ կը հաղորդուին Գահիրէի Առաջնորդարանին ի վաւերացումն Տեղեկագրերու և հաշուեկշիռներու Առաջնորդարան մատուցումը, եթէ սահմանեալ պայմանաժամերու մէջ տեղի չունենայ, Առաջնորդարանը իրաւունք ունի ազդարարութիւն ընելու Ընկերութեան, որ եթէ

անհետեանք մնայ, Ազգային Գաւառական Վարչութեան Քաղաքական ժողովը յարմար դատածը ի գործ կը դնէ յօգուտ Ընկերութեան :

Յօդ. 11. — Գործադիր ժողովը պարտական է սոյն կանոնադրի, և Ընդհանուր ժողովոյն որոշումներուն համեմատ վարել իր պաշտօնը, որու կիրառութեան աստն եթէ սոյն կանոնադրի մէջ չնախատեսուած ու է պարագայի հանդիպի, պարտաւոր է զբաւորապէս Ընդհանուր ժողովին զիմել, և անոր զրաւոր հրահանգաց համեմատ վարուիլ :

Յօդ. 12. — Ընկերութեանս հասոյթի ազդիւրներն են՝ Ա. Ընկերաց բաժնեգինները . Բ. Նուէրներ կամ կտակ . Գ. Վիճակահանութիւն . Դ. Թատերական ներկայացում . Ե. Նուագահանդէս, գաշտային հանդէս . Զ. Գրքերու հրատարակութիւն . Է. Ուրիշ միջոցներ որոնց գործադրութեան համար սակայն Ընդհանուր ժողովոյ հաւանութիւնը անհրաժեշտ է :

Յօդ. 13. — Ընկերութեանս ամէն կարգի հասոյթները կը գանձուին, տպեալ թիւ՝ և բուն ունեցող ընկալապրերով, որ կը կրեն Գործադիր ժողովոյն Ատենապետի և Գանձապետի ստորագրութիւնները, և Ընկերութեան կնիքը, ծախքերը պէտք է ունենան արդարացնող ստացականներ :

Յօդ. 14. — Գործադիր ժողովը կը քուէարկէ նպատաները, և կը հասցնէ իրենց տեղը ապահով կերպով, սակայն պարտաւոր է տարին առ տաւելն, երկու պարգեւաւոր Եփրատական Գրեաթի Ֆօնտիլ արժեթուղթ պնել, և Առաջնորդարանին յանձնել ի պահ : Գործադիր ժողովը անոնց միայն ստիպը կրնայ գործածել . արժեթուղթերու ու անոնց հաւանական պարգեւներու գործածութիւնը, Ընդհանուր ժողովոյն որոշման վերապահեալ է :

Յօդ. 15.— Ընկերութիւնս թէեւ իր պաշտօնի բնութեամբ մնայուն հանգամանք ունի, սակայն լուծեալ կը նրկատուի եթէ անդամոց թիւը տասնէն պակաս մնայ. այն ատեն Գահիրէի Հայոց Առաջնորդարանն՝ Ընկերութեան գոյքը հնչուն գրամի վերածելով, կը զրկէ նպաստի կարօտ տեղ մը Հայաստանի կամ Կիլիկիոյ մէջ:

Յօդ. 16.— Ընկերութիւնը լուծուելու կամ լուծեալ նրկատուելու պահուն, Գահիրէի Հայոց Առաջնորդարանը, իրաւունք ունի պահանջելու Ընկերութեան տոմարները ու թուղթերը, որու ձեռքի մէջ որ կը գտնուին, և պահելու զանոնք իր ղիւանատան մէջ:

Յօդ. 17.— Ընկերութեանս առաջին յօդուածը անփոփոխ է, բայց միւս յօդուածները ի հարկին վերաքննելի են. վերաքննելի կէտերը Գործադիր ժողովէ ընդհանուրին կ'առաջարկուին պատճառաբանեալ պաշտօնագրով մը. Ընդհանուր ժողովը եթէ ո և է փոփոխում, յապաղում կամ յաւելում որոշէ, Ազգային Առաջնորդարանին կ'իմացնէ ի հաստատութիւն. մինչև որ այդ հաստատութիւնը գրաւորապէս Ընկերութեանս հաղորդուի, Ընդհանուր և Գործադիր ժողովները պարտաւոր են չին տրամադրութեանց համեմատ վարուելու:

Գահիրէ 1 Յունուար 1905

Ի ղիմաց Վասպուրականի Որբախնամ Ընկերութեան Ընդհանուր ժողովոյ.

Ա. Ատենապետ.
ԵՌԻՍՈՒՅ ԱՋԻՁ

Ի ղիմաց Գործադիր ժողովոյ:

Ատենապետ
Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Վ. Ատենապարի
Ե. ԱԻԱԳԵԱՆ

Ի դիմաց Ակնայ Որբախնամ Ընկերութեան Ընդհանուր
ժողովոյ Ատենապետ Ատենաղալիք
Շ. ՇԻՇՄԱՆԵԱՆ Ա. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ի դիմաց Գործադիր ժողովոյ Ատենապետ Ատենաղալիք
Յ. ՆՈՐԻԿԵԱՆ Ա. ԼՈՐԻՃԵԱՆ
ԿՅԻՐ

Ի դիմաց Արաբկիրու Որբասիրաց Ընկերութեան Գոր-
ծադիր ժողովոյ Ատենապետ Ատենաղալիք
Ա. ՊԷՐՊԷՐԵԱՆ Ա. Ս. ԲՐԻՏԵԱՆ
ԿՅԻՐ

Ի դիմաց Արաբկիրու Հոգատարին Դիւան Ընդհանուր
ժողովոյ Ատենապետ Ատենաղալիք
Վ. ԳԱԼՓԱԳՃԵԱՆ Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆ

Դիւան Գործադիր ժողովոյ
Ատենապետ Ատենաղալիք
Ն. ԱՂԱՋԱՐՄ ՇՄ. Ս. ԲՐՈՒՏ
ԿՅԻՐ

Թիւ 1929

Հաստատուած Աղգային Գաւառական Վարչութեան
Պատ. Քաղաքական ժողովոյ 1906 Յունուար 5ի (Ն. Տ.)
52րդ. նիստի մէջ :

ԿՅԻՐ

Գահիրէ 4/17 Յունուար 1906

Առաջնորդ Հայոց Եգիպտոսի
Նախագահ Քաղաքական ժողովոյ
ՄԿՐՏԻՉ Ծ. ՎՐԴՊ. ԱՂԱՆՈՒՆԻ


Միացեալ Որբախնամ Ընկերութիւնը՝ Միութեան կյանն յանձնաժողովը, նախորդ տարուայ մէջ ղրկած է էջմիածին վեհ. Հայրիկին, ի նպատակով կառուի ազգային հետեանօք եղած որբերուն Մնգլ. ոսկի 80

Միացեալ Որբախնամ Ընկերութիւնը՝ իր առջի վեց ամսեային հետեան ի նպատակով ղրկած է, կիլիկիոյ և Հայաստանի զանազան քաղաքներ .

Վանի Երիմեան վարժարանին	40
Կիլիկիոյ Ամեն. Ս. Կաթողիկոսին, իր թեմերուն մէջ գտնուած ազգատիկ դպրոցներուն ու որբերուն	35
Գալլիէթի Հայուհեաց բարեգործական Ընկերութեանց .	20
Արաբկիրու Գեր. Առաջնորդին տեղւոյն որբերուն .	15
Վանի Սալնապատու Ս. Գրիգորի Պատ. Հոգաբարձութ. .	10
Մուշի Գեր. Առաջնորդին, տեղւոյն որբերուն	10
Լիմ և Կաուց անապատներու որբանոցին	15
Սղերզու Ազգային որբանոցին	10
Ակնայ ազգատիկ ուսանողներու	10
Տիվրիկի որբանոցին	10

Գումար 255

ԿՈՉ ԱՌ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Հայաստանի մէջ օր օրի վատթարացող դրութեան պատճառով, երկսեռ որբերու թիւը փոխանակ նուազելու՝ դժբաղդաբար կ'աւելնայ :

Այս պայմանաց տակ Գահիրէի Միացեալ Որբախնամ Ընկերութիւնը զեռ շատ ծառայութիւններ կատարելու կոչուած են : Անհրաժեշտ օգնութեան հարկը այնքան մեծ է, որքան ստիպողական, որ Ընկերութիւնը քն վարաներ վիայոյս հատարակութեանը ազգատիրական զգացմանց զիմել, երկրին մէջ որբոց և ազգատիկ ուսանողներուն աննախանձելի կացութիւնը քջիկ մը փոփել կրնալու համար :



Ի զիմաց Ընդհանուր ժողովոյ Ատենապետ Ատենադպիր
Օ. ՏԵՐՎԻՇԵԱՆ Ա. ՊԱՆԵԱՆ

